ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ II, № 6, 1949 Биол. и сельхоз. науки

# ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԱՆՃԱՐԵՂ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔՆ ԵՆ

*Մեր հայրենիքի ժողովուրդները կոմունիստական հասարակության կառուցման իրենց անձնվեր աշխատանքում գաղափարապես զինված և ոգեշնչված են Մարքսի-Էնգելսի—Լենինի—Ստալինի մեծ ուսմունքով։ Այդ ամենահաղթ ուսմունքի գրանիտե տեսական հիմքի վրա զարգանում են սովետական գիտության բոլոր ճյուղերը, այդ թվում և Միչուրինյան մատերիալիստական բիոլոգիան։*

*Ընկեր Ստալինի հանճարեղ գաղափարները և ցուցումներն ուղղում էին և ուղղում են բիոլոգիական և գյուղատնտեսական գիտության զարգացումը և վճռական նշանակություն ունեն նրա հաջողությունների համար։*

*Սովետական մատերիալիստական բիոլոգիան աչքի ընկնող հաջողությունների է հասել այն պատճառով, որ նա կարևորագույն պրոբլեմները լուծելու գործում անդավաճան կերպով ղեկավարվում է դիալեկտիկական մատերիալիզմի գիտական դրույթներով, որ նրա զարգացումը ղեկավարում է Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիան, գիտության մեծագույն կորիֆեյ ընկեր Ստալինի գաղափարներով և ցուցմունքներով։*

*Ընկեր Ստալինին մենք պարտական ենք նրանով, որ մեր երկրում միչուրինականները գիտական դիսկուսիաների պատմության մեջ չտեսնված պարտության մատնեցին ռեակցիոն բիոլոգիայի ներկայացուցիչներին և պաշտպանեցին բնության մեծ վերափոխիչ Ի. Վ. Միչուրինի ուսմունքը սովետական ժողովրդի համար։ Դա խոշոր իրադարձություն էր սովետական ժողովրդի գաղափարական կյանքում։ «Բիոլոգիայի հարցերին նվիրված գիտական դիսկուսիան անց կացվեց մեր պարտիայի ղեկավար ազդեցության տակ։ Ընկեր Ստալինի ղեկավարող գաղափարներն այստեղ ևս վճռական դեր խաղացին նոր, լայն հեռանկարներ բացելով գիտական և գործնական աշխատանքում» (Վ. Մ. Մոլոտով)։*

*Պատմության մեջ առաջին անգամ բիոլոգիական ուսմունքը կառուցվեց մարքսիստական-լենինյան փիլիսոփայության դրույթները կենդանի բնության երևույթներն ուսումնասիրելու վերաբերյալ գիտակցական ու հետևողական կերպով կիրառելու հիման վրա։*

*Դիալեկտիկական մատերիալիզմը, ինչպես հայտնի է, լայն բնական-գիտական հիմք ունի։ Կյանքի օրենքների և կենդանի բնության ռևոլյուցիոն վերափոխման ուղիների վերաբերյալ այն ծավալուն գիտելիքները, որոնք ընդհանրացված են միչուրինյան բիոլոգիայի ներդաշնակ սիստեմի մեջ, կազմում են մարքսիստական-լենինյան պարտիայի աշխարհայացքի բնական-գիտական հիմունքի կարևորագույն մասերից մեկը։*

*Լինելով հետևողականորեն մատերիալիստական տեսություն կենդանի բնության զարգացման օրենքների մասին, միչուրինյան բիոլոգիան իր*

փիլիսոփայական հիմունքը տեսնում է ընկեր Ստալինի կողմից հանճարեղորեն զարգացրած դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքի մեջ։

Մարքսիստական-լենինյան փիլիսոփայության «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին» կլասիկ աշխատության մեջ ընկեր Ստալինը ցույց է տվել, որ մարքս-լենինյան փիլիսոփայության օրենքները ճշտորեն արտացոլում են ուժերի օբյեկտիվորեն գոյություն ունեցող ռեալ փոխհարաբերությունները հասարակության և բնության զարգացման մեջ, որ նրանք խորը և ճիշտ կերպով բացահայտում են հասարակական ու բնական կապերն ու փոխհարաբերությունները։ Այդ պատճառով էլ բիոլոգ-միչուրինականների համար պարզ է, որ գիտականորեն ուսումնասիրել կենդանի բնության բարդ երևույթները՝ նշանակում է ուսումնասիրել այդպիսիք ստալինյան դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից։

Գիտությունը չի կարող գիտություն կոչվել, եթե նա երևույթները չի ուսումնասիրում այն դրությամբ, ինչ դրությամբ որ նրանք տեղի են ունենում բնության մեջ։ Մատերիալիստական գիտության անպայման պահանջներից մեկը հանդիսանում է բնական օրինաչափությունների ճշգրիտ վերարտադրման այս պահանջը։ Դեռ 1906 թվին «Անարխիզմ թե սոցիալիզմ» հայտնի աշխատության մեջ ընկեր Ստալինը նշել է կյանքի երևույթների ուսումնասիրման նկատմամբ այդ մոտեցման բացառիկ կարևորությունը։ Նա գրել է այն մասին, որ «կյանքը պետք է դիտել հենց այնպես, ինչպիսին է նա իրականում» (Ի. Ստալին. Երկեր, հատոր 1, էջ 335)։

«Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի մասին» հանճարեղ աշխատության մեջ ընկեր Ստալինը մեջ բերելով Էնգելսի ասածը, նորից ընդգծում է, որ բնության երևույթների բնական ըմբռնումը, առանց որևէ ավելացումների, հանդիսանում է մատերիալիստական դիալեկտիկայի անպայման պահանջը։

Գիտության պատմությանը հայտնի են խոշորագույն գիտական հայտնագործությունների զարմանալի օրինակներ, հայտնագործություններ, որոնք պայմանավորված են այնպիսի պրիոմներ ու եղանակներ գտնելով ու կենդանի օրգանիզմների ուսումնասիրման գործում կիրառելով, որոնք թույլ են տալիս պահպանել նրանց կենսական գործունեության բնական պայմանները։

Մինչև հանճարեղ Պավլովը, մարսողական գեղձերի գործունեության ուսումնասիրման բոլոր եղանակները բերում էին կենդանիների գոյության բնական պայմանների խախտմանը։ Մեծ Պավլովի հսկայական աշխատանքը հասցրեց, ինչպես ինքն է անվանել «քրոնիկական ֆիզիոլոգիական պրիոմի» հայտնագործմանը, որը նպաստեց պայմանական ռեֆլեքսների ուսմունքի հիմնավորմանը, որն իր հերթին հսկայական ազդեցություն գործեց ֆիզիոլոգիայի բոլոր բնագավառների վրա։

Մորգանիստ-վեյսմանիստների բազմաթիվ անհաջողությունները ու սխալները, որոնք վերջ ի վերջո նրանց հասցրին գիտական կործանման, բացատրվում են ի միջի այլոց նրանով, որ մորգանիստները կենդանի բնությանը վերագրում են այնպիսի հատկություններ, որպիսիք նրան բոլորովին հատուկ չեն, և դրանով իսկ ահռելի չափով խեղաթյուրում են բնական երևույթների բնական պատկերը։

Բնական պրոցեսների օբյեկտիվ ուսումնասիրությունն այն դրությամբ,

ինչ դրությամբ որ նրանք տեղի են ունենում բնության մեջ, առանց կողմնակի գործոնների ներգրավման, հանդիսանում է ժամանակակից մատերիալիստական բիոլոգիայի ղեկավար դրույթը։

Բույսերի և կենդանիների ժամանակակից օրգանիզմները դիտելով որպես պատմական զարգացման արդյունք և բացահայտելով նրանց մեջ բիոլոգիական պահանջները, որպես ժառանգականության ամենաէական հատկանիշ, միչուրինյան բիոլոգիան գտել է այդ պահանջների ծագման բնական ուղիները՝ օրգանիզմների գոյության պայմանների ազդեցության տակ։

Կենդանի բնության երևույթները դիտելով որպես պրոցեսներ, որոնք փոխադարձաբար պայմանավորված են պատճառականորեն, փոխադարձաբար կապված են կյանքի պայմանների հետ, միչուրինյան բիոլոգիան գտել է ոչ միայն փոփոխականության ընդհանուր պատճառը, այլև օրգանիզմների մեջ առաջնային փոփոխությունների ծագման շատ մասնավոր օրինաչափություններ։ Զարգացման ձևափոխված տիպի մեջ միչուրինյան բիոլոգիան տեսնում է օրգանիզմների փոփոխականության առաջնապատճառը։ Ընդսմին օրգանիզմների զարգացումը դիտվում է կյանքի պայմանների, միջավայրի պայմանների հետ միասնության մեջ։ Այս գիտական մոտեցման մշակման համար հսկայական նշանակություն է ունեցել մեծ Ստալինի հայտնի տեսական դրույթն այն մասին «...որ բնության մեջ ոչ մի երևույթ չի կարող հասկացվել, եթե այն վերցնենք մեկուսացած ձևով, շրջապատող երևույթների կապակցությունից դուրս, որովհետև բնության ամեն մի բնագավառում ամեն մի երևույթ կարող է վերածվել անհեթեթության, եթե այն դիտենք շրջապատող պայմանների կապակցությունից դուրս, նրանցից կտրված ձևով, և ընդհակառակը, ամեն մի երևույթ կարող է ըմբռնվել ու հիմնավորվել, եթե այն դիտվում է շրջապատող երևույթների հետ իր ունեցած անխզելի կապակցության մեջ, իր պայմանավորվածությամբ, իրեն շրջապատող երևույթներով» (ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, էջ 142)։

Սովետական մատերիալիստական բիոլոգիայի փայլուն հաջողությունների ամբողջ պատմությունը հաստատում է առանձին պրոցեսների, օրգանիզմի առանձին օրգանների գործունեության, օրգանիզմի և միջավայրի միջև եղած կապերի գիտական որոնումների և այդպիսիները գտնելու մեծ ստեղծագործական նշանակությունն այդ կապերի անընդհատ ձևափոխության իրագործության պայմաններում՝ կախված օրգանիզմների կյանքից կամ շրջապատող միջավայրում տեղի ունեցող փոփոխություններից։

Մեծ Պավլովի ստեղծագործության հսկայական արդյունավետությունն ի միջի այլոց բացատրվում է նաև նրանով, որ նա կարողացավ հայտնաբերել կապեր և փոխադարձ պայմանավորվածության երևույթներ այնպիսի բնագավառներում, ինչպիսին զգայականության օրգանների բնագավառն է և բարձր նյարդային գործունեության բնագավառը, գանգուղեղի կեղևում հայտնաբերել այնպիսի պրոցեսներ և նրանց փոխադարձ ազդեցություններ, ինչպես գրգռման և արգելակման պրոցեսները։ Երևույթների փոխադարձ կապերի և անցումների ուսումնասիրությունը մատերիալիստական ֆիզիոլոգիային հնարավորություն է տվել ցայտուն ընդհանրացումներ անել պայմանական ռեֆլեքսների ժառանգական ամրացման հնարա-

վորության մասին։ Կենդանու ներքին աշխարհի և նրա բարձր նյարդային գործունեության բացահայտումը շրջապատող պայմանների միասնության մեջ և այսպես կոչված «հոգեկանի» սֆերայի ազատումը ամբողջովին իդեալիստական սուբյեկտիվ հոգեբանության մենաշնորհ իշխանությունից՝ մեր հայրենական բիոլոգիայի խոշորագույն նվաճումն է հանդիսանում։ Մատերիալիստական բիոլոգիայի այդ ընդհանրացումների համար հսկայական նշանակություն են ունեցել ընկեր Ստալինի հանճարեղ գաղափարները՝ մարքսիստական փիլիսոփայության մատերիալիստական մոնիզմի մասին և իդեալիզմի, վուլգար մատերիալիզմի դուալիզմի հակագիտական էության նրա մերկացումները։

«Միասնական և անբաժան բնությունը—գրում է ընկեր Ստալինը «Անարխիզմ, թե սոցիալիզմ» աշխատության մեջ—արտահայտված երկու տարբեր ձևերով՝ նյութական և իդեալական. միասնական և անբաժան հասարակական կյանք, արտահայտված երկու տարբեր ձևերով՝ նյութական և իդեալական—ահա ինչպես պետք է նայենք մենք բնության և հասարակական կյանքի զարգացման վրա։

Այս է մատերիալիստական թեորիայի մոնիզմը» (Ի. Ստալին. Երկեր, հատոր 1, էջ 351—352)։

Բացահայտելով առանձին պրոցեսների միջև եղած փոխադարձ կապերն ու ազդեցությունները, որոնք այնքան անհրաժեշտ են կյանքի առանձին երևույթների սպեցիֆիկ առանձնահատկությունների ճանաչողության համար, բիոլոգիան փաստերի ավելի ու ավելի ամուր հիման վրա և զինավորվելով մարքս-լենինյան փիլիսոփայության գաղափարներով, բացահայտում է օրգանիզմների կենսական գործունեության ամբողջ բնագավառների փոխադարձ կախվածությունն ու ընդհանրությունը։ Այդ տեսակետից աչքի ընկնող գիտական ընդհանրացում է հանդիսանում ակադեմիկոս Վիլյամսի ուսմունքը երկրագործության խոտադաշտային սիստեմի մասին, որը հիմնըված է գյուղատնտեսական արտադրության մեջ բուսաբուծության (այնինքն բարձր կանաչ բույսերի մշակության), անասնաբուծության և հողի մշակության կամ երկրագործության միասնության վրա։

Վերջապես գիտական գիտելիքների տարբեր բնագավառների հիմնալի սինթեզի օրինակ է ծառայում բիոլոգիայի բնագավառում ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի գործունեությունը։ Նրա ագրոբիոլոգիական ուսմունքում օրգանապես միաձուլվել և հետագա զարգացում են ստացել Տիմիրյազև—Միչուրինի ուսմունքը՝ օրգանիզմների զարգացման օրենքների և նրանց ժառանգական վերափոխման ուղիների մասին մի կողմից և Դոկուչաև—Վիլյամսի ուսմունքը՝ հողագոյացման օրինաչափությունների և հողերի բերրիության ղեկավարելու մեթոդների մասին, մյուս կողմից։ Դրանով իսկ ժամանակակից մատերիալիստական ագրոբիոլոգիան սոցիալիստական երկրագործության զարգացման ամենից ավելի լայն բնական-գիտական հիմքն է ներկայացնում։

Միչուրինյան բիոլոգիայի, որպես կենդանի բնության օրինաչափությունների ճանաչելիության տեսության, առանձնահատկություններից մեկն է հանդիսանում նրա բազմակողմանի մոտեցումը զարգացման պրոցեսների ուսումնասիրությանը։

Բացահայտելով օրգանիզմների զարգացման կոնկրետ օրինաչափու-

թյունները, բիոլոգ-միչուրինականները ղեկավարվում են ընկեր Ստալինի հայտնի տեսական դրույթով, թե անհրաժեշտ է «...որ երևույթները դիտվեն ոչ միայն նրանց փոխադարձ կապակցության ու պայմանավորվածության տեսակետից, այլև նրանց ծագման ու մահացման տեսակետից» (ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց, էջ 142)։

Ի տարբերություն բիոլոգիական միակողմանի ուսմունքներից, միչուրինյան մատերիալիստական բիոլոգիան ելնում է ստալինյան այն դրույթից, որի համաձայն շարժումը երկակի ձև ունի.

«...Դիալեկտիկական մեթոդն ասում է, որ շարժումն ունի երկակի ձև—էվոլյուցիոն և ռևոլյուցիոն» (Ի. Ստալին. Երկեր, հատոր 1, էջ 338)։

Իսկապես, այն բանի պատճառներից մեկը, որ հանճարեղ Դարվինը չկարողացավ հայտնագործել օրգանիզմների փոփոխականության աղբյուրները ու պատճառները, սխալներ գործեց այսպես կոչված «անորոշ» փոփոխականության հարցում, հանդիսանում էր այդ հարցերը լուծելու համար ոչ միայն այն ժամանակվա գիտության ընդհանուր անպատրաստականությունը, այլև Դարվինի համոզմունքը, որ բնությունը թռիչքներ չի գործում, նրա համոզմունքը՝ աստիճանական փոփոխությունների իբր թե անբաժան գերիշխանության մասին։ Դարվինի այս սխալը գիտության ռեակցիոներների կողմից հետագայում ուռճացվեց և վեր ածվեց ճապաղ, վուլգար էվոլյուցիոնիզմի ամբողջ մի ուղղության։

Մատերիալիստական բիոլոգիայի զարգացման համար հսկայական նշանակություն ունեցավ դարվինիզմի այս սխալ կողմի քննադատությունը մեծ Ստալինի կողմից.

«...Դարվինիզմը մերժում է ոչ միայն Կյուվիեի կատակլիզմները, այլև դիալեկտիկորեն ըմբռնված զարգացումը, որը ներառնում է ռևոլյուցիան, մինչդեռ դիալեկտիկական մեթոդի տեսակետից էվոլյուցիան և ռևոլյուցիան, քանակական և որակական փոփոխությունները միևնույն շարժման երկու անհրաժեշտ ձևերն են» (Ի. Ստալին. Երկեր, հատոր 1, էջ 348)։

Մարքսիստական-լենինյան փիլիսոփայությունը չի սահմանափակվում քանակական փոփոխությունները որակականների վերածվելու օրինաչափության սահմանումով։ Ընկեր Ստալինը չգերազանցված խորությամբ բացահայտում է այդ պրոցեսի նաև ներքին բովանդակությունը։ Պայքարը և հակասությունները նորի և հնի միջև, մեռնողի և ծնվողի միջև կազմում է զարգացման պրոցեսի ներքին բովանդակությունը—սովորեցնում է ընկեր Ստալինը։

Ուսումնասիրելով զարգացման պրոցեսների բնույթը, բիոլոգները ղեկավարվում են ընկեր Ստալինի հայտնի տեսական դրույթով այն մասին, որ «...բնության առարկաներին, բնության երևույթներին հատուկ են ներքին հակասությունները, որովհետև նրանք բոլորն էլ ունեն իրենց բացասական և դրական կողմը, իրենց անցյալը և ապագան, իրենց մահացողն ու զարգացողը, որ այդ հակադրությունների պայքարը հնի և նորի, մահացողի և ծնվողի, իր դարն անցնողի և զարգացողի միջև մղվող պայքարը կազմում է զարգացման պրոցեսի ներքին բովանդակությունը, քանակական փոփոխությունների՝ որակականների վերածվելու ներքին բովանդակությունը» (ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց, էջ 145—146)։

Զարգացման պրոցեսի ներքին էության ընկեր Ստալինի այս հանճա-

ճարեղ ընդհանրացումը ղեկավարող է հանդիսանում օրգանիզմների ինքնառեգուլյացիայի վերաբերյալ բազմաթիվ էքսպերիմենտալ տվյալների անալիզի ժամանակ։

Ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոն և միչուրինականներ-ագրոբիոլոգներն այդեն էքսպերիմենտալ եղանակով նոր տեսակներ ստանալու բազմաթիվ ապացույցներ են ներկայացրել՝ աշնանացան բույսերը գարնանացանի և գարնանացան բույսերն աշնանացանների վերափոխելու բազմաթիվ օրինակներ։ Իր «Բիոլոգիական գիտության մեջ տեսակի դրության մասին» զեկուցման մեջ ակադեմիկոս Լիսենկոն իր աշխատանքներից օրինակներ բերեց բոլորովին այլ տեսակի, կարծր ցորեններից էքսպերիմենտալ ճանապարհով փափուկ ցորեններ ստանալու վերաբերյալ։ «Մեկ տեսակի վերափոխումը մի այլ տեսակի տեղի է ունենում թռիչքաձև — ասում է Լիսենկոն,

Նա անում է կարևորագույն եզրակացություն՝ որ «...Նոր տեսակի առաջացումը նախապատրաստվում է սպեցիֆիկ նոր պայմաններում, մի շարք սերունդների ընթացքում ձևափոխված կենսական գործունեությամբ»։

Միայն միչուրինյան բիոլոգիան, որը հաստատուն կերպով հիմնված է դիալեկտիկական մատերիալիզմի ճիշտ հիմքի վրա, ի վիճակի է տեսակառաջացման պրոցեսը ոչ միայն բացատրել, այլև ուղղություն տալ նրան։ Բիոլոգիական տեսության այս կարևորագույն բաժնում միչուրինականները ելնում են զարգացման պրոցեսի՝ ընկեր Ստալինի տված հանճարեղ բնորոշումից։

Մատերիալիստական բիոլոգիան սովորեցնում է, որ անհնարին է ճիշտ ճանաչել զարգացումը, շարժման բնույթը նրա երկու ձևերի միասնության մեջ, առանց բացահայտելու օրգանիզմի փոխադարձ կախվածությունը միջավայրից, առանց որոշելու կյանքի պայմանների, գոյության պայմանների նշանակությունը փոփոխականության համար։ Եվ արտաքին պայմանների ձևագոյացնող ազդեցության կողմնակիցներին նեոդարվինիզմի գլխավոր քարոզիչ վեյսմանիստները իզուր լամարկիստներ են անվանում։ Պետք չէ լինել լամարկիստ, համաձայնելու համար այն բանի հետ, որ լամարկիզմի և վեյսմանիզմի միջև տեղի ունեցող պայքարում վեյսմանիստներն ընկնում էին միստիկայի գիրկը, իսկ լամարկիստները պաշտպանում էին գիտության շահերը։ Ժամանակակից միչուրինյան բիոլոգիան լիովին ընդունում է Լամարկի պնդումների գիտականությունը օրգանների ֆունկցիոնալ գործունեության, ինչպես նաև արտաքին միջավայրի պայմանների կարևորագույն նշանակության մասին՝ ժառանգականության համար։ Ընդսմին միչուրինականներն այդ հարցում ղեկավարվում են ընկեր Ստալինի հետևյալ հայտնի դրույթով.

«Իսկ ինչ վերաբերում է շարժման ձևերին, ինչ վերաբերում է այն բանին, որ համաձայն դիալեկտիկայի մանր, քանակական փոփոխությունները վերջի վերջո հանգում են մեծ, որակական փոփոխությունների, — ապա այդ օրենքը հավասարապես ուժ ունի նաև բնության պատմության մեջ։ Մենդելեևյան տարրերի պարբերական սիստեմը պարզ ցույց է տալիս, թե բնության պատմության մեջ ինչպիսի մեծ նշանակություն ունի որակական փոփոխությունների ծագումը քանակական փոփոխություններից։ Հենց այս մասին էլ վկայում է բիոլոգիայի մեջ նեոլամարկիզմի թեորիան, որին

զիջում է իր տեղը նեոդարվինիզմը։ (Ի. Ստալին. Երկեր. հատոր 1, էջ 423)։

Միչուրինականները բնության երևույթներն ուսումնասիրելիս ելնում են ստալինյան այն դրույթից, որ գիտությունը պատահականությունների թշնամի է և որ բնությունը ճանաչելը ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ։ Ըստ այդմ նրանք ղեկավարվում են Ստալինի ցուցմունքով այն մասին, «...որ բնության օրենքների վերաբերյալ մեր գիտելիքները, որոնք ստուգված են փորձով, պրակտիկայով, հավաստի գիտելիքներ են, որոնք օբյեկտիվ ճշմարտությունների նշանակություն ունեն, որ աշխարհում չկան անճանաչելի իրեր, այլ կան միայն իրեր, որոնք դեռ ըմբռնված չեն, որոնք գիտության և պրակտիկայի ուժերով կբացահայտվեն ու կճանաչվեն» (Համ Կ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, էջ 151)։

Ընկեր Ստալինի հանճարեղ գաղափարները միչուրինյան մատերիալիստական բիոլոգիայի զարգացման և հաջողությունների հիմք են հանդիսացել։ Նրա ձևավորումը, զարգացումը և վերջնական հաղթանակը գիտության թշնամիների նկատմամբ հնարավոր էր միայն սովետական կարգերի պայմաններում, գիտության պահանջների վերաբերյալ իսկական հոգատարության իրադրության, մեծ Ստալինի ուշադրության շնորհիվ ստեղծված իրադրության պայմաններում։

Աշխարհի և ոչ մի երկրում գիտության ծաղկման համար չեն ստեղծված այնպիսի պայմաններ, ինչպես մեր երկրում։ Մեր մեծ երկիրը ծածկված է քաղաքներում ու գյուղերում, ֆաբրիկաներին, գործարաններին ու կոլխոզներին կից անհամար թվով լաբորատորիաների, փորձնական հիմնարկների, գիտական ինստիտուտների ցանցով, հիմնարկներ, որոնք ուսումնասիրում են բիոլոգիական ու գյուղատնտեսական գիտության հասունացած հարցերը գիտության ու արտադրության մարդկանց համագործակցության ու փոխադարձ օգնության պայմաններում։ Ոգեշնչված մեծ Ստալինի ամենահաղթ գաղափարներով, բնության վերափոխման ստալինյան վեհ պլանով, նրանք համառ աշխատանքով փոխում են մեր մեծ Հայրենիքի անսահման տարածությունների դեմքը։

Բնության վերափոխման Ստալինյան պլանի իրագործման հետևանքով ՍՍՌՄ Եվրոպական մասի տափաստանային և անտառատափաստանային ռայոններում 120 միլիոն հեկտար հող կվերափոխվի ոռոգման և կանաչ բուսականության բարերար ազդեցության տակ։

Ինչպիսի անսահման հնարավորություններ են բացվել իսկական մատերիալիստական բիոլոգիայի զարգացման համար։

Բնության վերափոխման Ստալինյան պլանը գործողության մեջ է։ Միլիոնավոր մարդիկ բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, պարտիայի, որն իր ամբողջ հերոսական պատմության մեջ երբեք կանգ չի առել դժվարությունների առաջ, հաջողությամբ կատարում են այդ վեհապանծ պլանը։